

Ընթանում էր արագապէս
 Սրտի փափագն առնելու,
 Երբ որ դոքա եղբայրական
 Բարե համբոյր տուին միմեանց,
 Շուտով հապա հրաժարական
 Ասաց արեն, էլ չերևաց,
 Մինչդեռ լուսինը լողում էր
 Պարզ երկնականմարի վերայ,
 Մինչդեռ վառ անթիւ աստեղներ
 Խաղում էին շուրջը նորա,
 Բացեց բերանը իմ ծերր,
 Մի ծանր յոգևոց հանելով,
 Պատմեց հանդարտ իւր վշտերը.
 Իրր խոստովանք ասելով,
 "Ասիր, իմ հարազատ որդեակ,
 Յիշիր փառքն ու այն պարտէզ.
 Որոնց տէրերն սնանկ տնանկ
 Կրումեն այստեղ ցաւեր պէսպէս":
 "Գոցա որդիք մերկ ու բորիկ
 Անտէր, անձար, թափառելով,
 Որոնում են դժած մարդիկ,
 Ողորմութեան կարօտելով":
 "Ահն արգեօք մարդիկ ողորմած,
 Որ իւրեանց տուրք ողորմութիւն
 Միայն դիտենայ ինքն, Աստուած,
 Եւ նա, որ ունի կարօտութիւն":
 "Ահն արգեօք դժած իշխաններ,
 Որոնց դատը լինի անաչառ.
 Զի խեղճ այրին իւր զանգատներ
 Կամի վճուել օրէնքով արդար":
 "Ահն արգեօք բարի մշակներ,
 Որք չունենային չար սերմեր,
 Կամ նոցա ագարակի մէջ
 Գէթ չ'գտանվէր որոմներ":
 "Ամ քաղցր արթուն հովիւներ
 Մխիթարված իւրեանց հօտերով,
 Կամ փոխադարձ յարմարութեամբ
 Կապված լինէին սուրբ սիրով":
 "Եւ վաճառական բարեխառն,
 Ստանալով արդար վաստակ,
 Զ'չեղէին չափն ու կշիռն
 Ունեցով բարի նպատակ":

"Ահն և ծշմարիտ եղբայրներ,
 Որոնց սիրտն ու լեզուն համաձայն,
 Գործ կատարէին շահարեր,
 տեղիք չ'տալով կորին ունայն":
 Ես գրաւած ծերի խօսքերով,
 "Ննջում եմ շուտ քաղցր քնով,
 Որից սթափուած տեսնում եմ,
 Ծեր չկայ, այլ երազում եղել եմ":

ՅԱՆՈՒՆԻ ՄԵՐԿԵԼԵԱՆԵՆ:

1. ՀԱՄԻԼԻ:

ՄԱՐԳԱՐԷՆ ՅՈՎՆԱՆ

Զինչ միրիկ նորահրաշ Միջերկրական ի ծովի,
 Զինչ ահաւոր և զայրագին գոչիւն ալեաց
 սոսկալի.
 Նաւ մի յալիս ծփայ ծփայ գայ և գնայ տարածից.
 Յերկնից մաղթէ զայցելութիւն նաւավարաց
 ձայն սաստիկ.
 Փախչի Յովնան, ո՛հ յերեսաց ամենակալ Արարչին,
 Յոյր տէրութիւն ամենազօր վայրբ ամենայն պա-
 րուրին.
 Եւ ո՛չ երթայ դէպ ի Նինուէ առ ի քարոյ բնակ-
 չաց,
 Զղջալ զմեզս և զերծանիլ ի կործանման վտան-
 զաց,
 Թէ ո՛չ գնացես, երկմիտ Յովնան, լինել քարոյ
 քաղաքին,
 Ուրեմն ի ծով անդր ընկզմեալ աւանդ լիցիս
 մեծ Կիտին.
 Տեսանիցես զզօրութիւն սքանչելեաց Արարչին,
 Գոլ օրինակ նորոցս զարդիս թաղման որդւոյն
 Միածնին,
 Զի նաւաստիք ազգմամբ վերնոյն գոգ հրաշալից
 ի վիճակ,
 Գտին զպարտեայն, առեալ արկին ծովուն խոռ-
 վեալ ի յատակ.
 Այլ Մարգարէն յետ երրակի լուսոյն պայծառ
 արեգին,
 Ել ի ցամաք ձեռամբ հաստչին յորովայնէ ի
 կետին:

